ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2.1
«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ 01.12.2021թ. ԹԻՎ 964-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ 24 հունվարի 2022թ,
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33) ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Խորեն Սիսակյան տեխնիկական ապահովման տնօրեն

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

Հարություն Սահակյան հեռահաղորդակցության համակարգի գլխավոր մասնագետ
Համլետ Մինասյան տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայության պետ

Հանձնաժողովի բացող անդամներ՝

Վահագն Ալթունյան տեղեկատվական տեխնոլոգիաների գլխավոր մասնագետ
Հայկ Նիկողոսյան անվտանգության համակարգի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Եսայան իրավապայմանագրային և գնումների բաժնի մասնագետ

Օրակարգ՝

1. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/114 որոշման կատարմանն ուղղված գործողությունների իրականացում:
2. «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատում:

1. Հանձնաժողովի նախագահը տեղեկացրեց հանձնաժողովի անդամներին, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/114 որոշմամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 15.12.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/114 ծածկագրով բողոքը բավարարվել է մասնակիորեն: Որոշում է կայացվել պարտավորեցնել թիվ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 08.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները: «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից «Փրիթի Ուեյ» ՍՊԸ հայտը մերժելու՝ բողոքով ներկայացված պահանջը գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշմամբ մերժվել է:

Ի կատարումն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/114 որոշման պահանջների՝ հանձնաժողովը որոշեց՝

ա) Դադարեցնել 08.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

բ) Դադարեցնել 08.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի անդամները արձանագրեցին «Փրիթի Ուեյ» ՍՊԸ և «Լանս» ՍՊԸ ներկայացված հայտերում անհամապատասխանություններ: Մասնավորապես՝

1. «Փրիթի Ուեյ» ՍՊԸ կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) ֆիրմային անվանման սյունակում նշված է Video-Wall Display, այլ ոչ թե Samsung ընկերության արտադրության դիսպլեյների ֆիրմային անվանումը:

2. «Լանս» ՍՊԸ կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) ֆիրմային անվանման սյունակում նշված է Տեսամոնիտորներ 110" Տեսա-Պատ (Video- Wall)՝ բաղկացած չորս LCD մոնիտորներից, այլ ոչ թե Mitsubishi Electric Corp. Ընկերության արտադրության դիսպլեյների ֆիրմային անվանումը:

3. «Լանս» ՍՊԸ կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) ապրանքային նշան սյունակում նշված է, առաջարկվող ապրանքի մակնիշը, իսկ մակնիշը սյունակում՝ ապրանքային նշանը:

4. «Լանս» ՍՊԸ կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) արտադրողի անվանումը սյունակում նշված է Mitsubishi Group, մինչդեռ առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումն է՝ Mitsubishi Electric Corp.

Հանձնաժողովի անդամները քննարկումների արդյունքում որոշեցին, որ «Փրիթի Ուեյ» ՍՊԸ կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) տեխնիկական բնութագրերը սյունակի մեջ ներկայացված նկարագիրը համապատասխանում է «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին: Անդրադառնալով IPS հապավման վերաբերյալ հանձնաժողովի կողմից 02.12.2021թ. տրված պարզաբանմանը, հանձնաժողովի անդամները արձանագրեցին հետևյալը:

Տալով IPS հապավման Intelligent Pixel Shift բացվածքը և չհավելելով «կամ համարժեքը» բառերը հանձնաժողովի անդամները ակամա անտեսել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով ամրագրված սկզբունքները, այն է՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

Պատվիրատուին անհրաժեշտ դիսպլեյի գործառույթը այդ անվանմամբ օգտագործվում է **միայն** ճապոնական Mitsubishi Electric Corp. Ընկերության կողմից:

«Փրիթի Ուեյ» ՍՊԸ ներկայացված ապրանքն ունի այդ գործառույթն, սակայն այլ անվանմամբ: IPS հապավումն դասակարգված չէ, և յուրաքանչյուր արտադրող իրավասու է իր կողմից արտադրված ապրանքի գործառույթը շարադրել իր հայեցողությամբ:

Հաշվի առնելով, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և, որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքը՝ հանձնաժողովը հիմք չի գտնում հրաժարվել պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքից:

Հանձնաժողովը միաձայն որոշեց

1.Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը և հանձնարարել հանձնաժողովի քատուղարին սույն

արձանագրությունը ուղարկելու միջոցով այդ մասին ծանուցել «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ին և «Լանս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել իրենց կողմից ներկայացված հայտերում առկա անհամապատասխանությունները:

Խորեն Սիսակյան		Հայկ Նիկողոսյան	
Հարություն Սահակյան		Համլետ Մինասյան	
Վահագն Ալթունյան		Մարիամ Եսայան	